

# Նկարիչ՝ մը եւս՝ Արամ որդի՝ Էդուարդի Իսաբէկեան

\*\*\*\*\*

Հալէպ քաղաքը մագնիսականութիւն մը ունի հետունքը վրայ իսկ ծաւալող : Այդ յատկութիւնը քաղաքին, կը տարածուի նաեւ հայոց վրայ, ահա թէ ինչու անյիշատակ ժամանակներէ ի վեր հայը ներկայութիւն է շնորհ այս քաղաքին մէջ : Անոր աուօրեային մաս կը կազմէ դարերէ ի վեր, կը պաշտպանէ գայն իր կուրծքով թշնամիներու դէմ . սյամաութիւնը այս մասին ունի արձանագրուած վկայութիւն . հայը կը մասնակցի վերաշինութեանը այս քաղաքին երկրաշարժներէ ետք եւ պակասին, հայը կը շէնցնէ այս յուրեքի ուղեւորը արհեստներով, կառուցներով, արուեստներով :

Ինք սպասաւանդել, կը զարգացնէ սպասաւանդումը :

Այս մասնուճներով կ'ուզուիմ դէպի Արամ Մանուկեան ժողովրդային տուն, որուն Լեւոն Շանթ սրահին մէջ Հալէպի Համալսարանը կազմակերպած է նկարչական ցուցահանդէսը հայրենի երիտասարդ նկարիչ Արամ Իսաբէկեանին :

Արամը նկարչներու ընտանիքէ մը կու գայ : Հայրը՝ Էդուարդ Իսաբէկեան, Հայաստանի մասնակաւոր նկարիչներէն մէկն է, ծաւալուն, էպոսային պատասաններու հեղինակ, բնիկ Իզդիբրցի, աշօրուան Հայաստանէն քայլաչափ մը անդին : Իզդիբրի կարծուր անձուր կրակ է Էդուարդ Իսաբէկեանի սիրտին մէջ . ահա ինչու մարպետ վրձնակիրը երեք տարի առաջ դրեց իր գրական առաջին գիրքը ու մէկ անգամէն այդ երկով ճանչցրեցաւ նաեւ որպէս վարպետ արձակագիր :

Նկարիչ եւ արձակագիր :

Այս ինչպէս Փայտաղեանը՝ մեծ դերասան, անդրադական Օթելլօ եւ . . . անուանի, փայլուն յուշագրող :

Արամին մայրը՝ Արփենիկ Նալպանտեանը, Թիֆլիսի նկարչական ակադեմիայէն, նայալէս շնորհալատ նկարչուհի, որ հիանցնելէ ետք իր դործերուն ակնդիրները, շուտ մեկնած է մեր աշխարհէն, առանց կարենալ հասնելու իրեն համար կարելի բարձունքներու :

Արամին՝ թե՛ ին՝ Տիմիթրի Նալպանտեան, Խորհրդային Միութեան ամէնէն շատ յարգուած նկարիչներէն մէկը, որուն բնակարանն ու արուեստանոցը Մոսկուայի մէջ, Կրեմլի անուան փողոցէն ոչ հեռու, իրաւ թանգարան մըն է մեր դարուն բո-



լոր մեծութիւններուն դիմանկարներովը խնայուած : Թանգարան մը, ուր լուսթեան մէջ հանդուր եւ միլիոնաւոր ակնդիրներ սպասող հաղարար նկարներ կան, բազմաթիւ եւ բազմարժէք հրատարակներու կողքին :

Տիմիթրի Նալպանտեանը հայ նկարիչ է : Ո՞վ պիտի գրազի իր գործերով : Ո՞ւր պէտք է երթայ միլիոններու հասնող անոր արուեստի հարստութիւնը : Հայաստանը կը մտածէ՞ այդ մասին :

Հուշակաւոր նկարիչ՝ Տիմիթրի Նալպանտեանը դէպի իննիսուն կ'երթայ : Ոչ մէկ խօսք իր մասին մեր մտնուլին մէջ : Արդեօք հայ մամուլը միայն անոր մահէն ետք լեզու պիտի առնէ : Մեծ նկարիչը թանգարան մը պէտք չէ՞ ունենայ իր իսկ երկրին մէջ : Իր հարստութիւնները պէտք չէ՞ փոխադրուին Հայաստան :

Եթէ այս բոլորին աէր շիանդինք, արժէքները աէր կը գտնեն :

Ու այս սպասական ոչ անաջինն է եւ ոչ ալ վերջինը դժբախտարար :

Ահա նկարչութեամբ յազելած այսպիսի շքանակէ մը կու գայ Արամ Իսաբէկեանը, որ ծնած է Երեւանի մէջ, 1952 թուականին :

Սկսած է նկարել ութ տարեկան հասակին : Անշուշտ դարձանալի չէ այն Երեւոյթը՝ երբ՝ ան, ամէն կողմ վրձին, երանգաթանակ, ներկ ու պատտանուեստած է ձեռնօրէն :

Հայրը սրահած է Արամին մանուկ հասակին նկարած դարձերը, որոնց մէջ չափի դժացումը չեչտուած է :

Արամը 13 տարեկան մանչուկ մը ունի՝ Մհերը, որ չի նկարեր : Ունի վեց տարեկան աղջնակ մը՝ Աննան, որ ամբողջ օրը նկարելով դրադած է :

Վերի տողերով տուի շրջանակը Արամ նկարիչին : Հիմա թոյլ տուէք նկարը դետեղեմ դժածս շրջանակէն ներս :

Քիչ կ'ըլլայ եթէ բւեմ, որ Արամ Իսարէկեան, 1975էն ի վեր մասնակցած է Հայաստանի մէջ կազմակերպուած բոլոր հաւաքական ցուցահանդէսներուն, երկու կամ երեք նկարով ամէն անգամ :

Ան, 1982ին, առաջին անգամ ըլլալով անհատական ցուցահանդէսով մը կը ներկայանայ Երեւանի նկարչասէր հասարակութեան :

Նոյն տարին Բ. անհատական ցուցահանդէս՝ էջմիածին քաղաքին մէջ, զոր կը սիրենք Վաղարշապատ կոչել :

Այս օրերուն երբ Հայէպ կը գտնուի Արամը, հանդէս կու գայ իր երրորդ անհատական ցուցահանդէսով. արդէն ծրարուած է Մոսկուայի իր ցուցահանդէսը, որ շուտով կ'իրականանայ :

Արամ Իսարէկեանը, մասնակցած է խմբական շատ մը ցուցահանդէսներու նաեւ արտասահմանի մէջ, որոնցմէ կրնանք թուել Շուէտի, Աւստրիոյ, Պուլիարիոյ, Լեհաստանի, Գամակոսի մէջ կազմակերպուած ցուցահանդէսները :

Եթէ հարցնելու ըլլաք՝ ո՞ր նկարչական դրարոցին իր պատկանելի պատասխանը կ'ըլլայ՝ աչ մէկ : Արամը ի՞ր դարձերն կը պատկանի :

Ժամանակի մարզն է : Եթէ երէկ դասական ձեւով կը նկարէր, ինչ որ ամէն նկարիչ կ'ընէ քիչ մը, այսօր ինքզինք դատած, մարդու, եւ հայ մարդու առօրեային երգիչն է, տխուր եւ երբեմն՝ այ դուարթ եղանակներով, այլ արուեստի ճամբով :

Մեր երկիրը մեծ վերելվայրուածներ կ'ապրի : Հայ նկարիչը չի կրնար բւեմ այս թոհուրոհին դիմաց : Բարեկրնեան խոռոակ լեզուներու շրջանն է : Արամը ճիւղեր մըն է, բայց փակ է իր առջեւ հորիզոնը : Ո՞ր երթալ եւ ինչպէ՞ս : Ահա իր մտահոգութիւնը զոր պատասախ վերածած է :

Արամին համար ամենաերջանիկ պահը այն բուպէն է, երբ վրձինը կը վերցնէ, գուռը կը փակէ եւ կը նկարէ : Իր ասլրած կեանքին ժամանակը նկարելով կը լեցնէ միայն :

Դեղձանիկը կրնա՞յ չերգել, նոյնիսկ երբ տըխուր է : Նկարիչը կրնա՞յ չնկարել, նոյնիսկ երբ

իր հայեացքին դէմ սլարդուողը Սոււդանի թիւն է կամ Գետաչէնի բռնադալթը :

Աշխարհի քառուղիներուն վրայ մինակուկ մնացած ժողովուրդի մը նկարիչ դաւակն է Արամ, որ հակառակ այս մինակութեան, կը հաւատայ թէ վրձինը պիտի յաղթէ գէնքին :

Կեանքը, Արամին համար, իմաստ կ'անէ նըկարչութեամբ :

Արամ Իսարէկեանը, որպէս երկնադրող ասլրած է երեք շրջան :

Առաջին շրջանը իր նկարելէն մինչեւ 1988 թուականը կ'երկարի : Այդ տարիներուն, առհասարակ հեռու կանգնած է թեմաթիւք նլութեք : Նկարած է հալթիւր մորթ հանդիս գոյներով . . .

Այդ դարձերուն մէջ կ'աշխատի դնել իմաստ եւ հաւատարակչութիւն :

Երեւանի Պետական Պատկերասրահը այդ դորձերէն ունի երկուքը :

Սոււմգայիթը սահ մը կարկամեցուց մեր արուեստագէտները : Անոնք սահմուկեցան եւ դադրեցան նկարել : Արամը՝ նոյնպէս : Բայց կեանքը պիտի շարունակուէր, ուրեմն եւ արուեստը :

Յուզումներ, անթմակայան, օղորտա . . . Արամը կը սկսի նկարել տպաւորապաշտութեան յարող ձեւով մը՝ մուգ եւ ցալտուն գոյներով :

Ահա գործ մը այդ շրջանէն՝ «Բորեմիներու խրախնամք» :

Երրորդ շրջանին կրափիքան է տիրապետող : Գեղանկարներ կան : Արամը միշտ կեանքը կը վերաբարադրէ : Եւ քանի որ ինք քաղաքացին է Հայաստանի, կու տայ հայրենի կեանքը իր մեծ վերելվայրուածներով :

«Կարմիր սենեակ», «Կանանչ ձիւտը», «Փախուստ» - ասոնք նորագոյն շրջանի գորձերն են :

Կը նկարէ փաքէլ, իւղաներկ : Տրամադրութիւններու շարք մը : Գոյները կու գան տրամադրութեանէն : Իսկ լո՞յսը : Առանց լոյսի չկայ նկարչութիւն :

Ունի գործ մը՝ «Անդրաբիկ»ը, զոր Հայէպ չէ բերած : Քիչ մը դերկրապաշտութիւն կայ այդտեղ : Մէկ կողմը Շապին Գարահիսարն է մշուշի մէջ, հայ բաղմութիւններն են եւ Անդրանիկը՝ ողին հայ ազատագրութեան :

Հայէպի այս ցուցահանդէսին Արամ ներկայացած է 45 գործով, որոնցմէ 16ը՝ իւղաներկ, իսկ մնացեալները՝ իւղոս փաքէլ, աճուարէլ եւ դուշ : Վերջինները Արամին նկարչութեան երրորդ շրջանը կը ներկայացնեն :

Աճա դործ մը՝ սեւ - ձերմակ, որ կը կոչուի «Նոր Տարուան հանդիպում Գառզուի»։ Ակնդիր մը այս նկարը տեսնելով ըսաւ. «Այս նկարիչը Գառզուէն ազդուած է»։ Այնինչ նկարիչը՝ այդ «Համպիպումը» անշուշտ որ Գառզուական գիծերով պէտք է ներկայացնէր, երբ հանդիպումը Գառզուին հետ է։

Հարէպահայ մեր արուեստագէտները կը նախընտրեն ունենալ «Արարատ», «Սեւան», «Էջմիածին», նման դործեր։

Բայց ահա ցուցահանդէսը կու դան գիտել բազմաթիւ արարներ, որոնց մէջ մէկ տասնեակի հասնող նկարիչներ։ Անոնք կը հաւնին Արամին նոր շրջանի դործերը։

Աշխուժ խօսակցութիւն կայ նկարներուն շուրջ ամէն օր։ «Հրեշտակ», «Գիշեր», «Առապել», «Ասպիտը», «Պտոյտ», «Մանկան հետ», ինչ կ'ըսեն այս նկարները։ Հետաքրքրական կարծիքներ շատ կան։ Նկարիչը կ'ընդհատուի այս աշխուժութեան, երբեմն կը ժպտի, երբեմն՝ բացատրութիւններ կու տայ։

Մեր երկասարգութիւնը պէտք է սորվի նկար գիտել։ Այստեղ կը ծաղի ընդհանուր դարպացումի հարց։

Մէկը կը հարցնէ «Հայաստանի մէջ միայն նըկարչութեամբ ապրող արուեստագէտ կա՞յ»։ Պատասխանը՝ «Այո, բայց քիչեր»։

Արամ Իսարէկեանը 1979ին կը սկսի դասաւանդել Երեւանի Գեղարուեստաթատերական Ինստիտուտէն ներս։ Իսկ այժմ, ան, Ինստիտուտի Կերպարուեստի Բաժնին տնօրէնի տեղակալն է։

Երկու արուեստ մէկ անունի տակ։ Արդեօք չէ՞ն խանդարեր զիրար։ Թատրոն եւ նկարչութիւն։ Ինչո՞ւ չզատել եւ առանձին չէնքեր չյատկացնել իւրաքանչիւրին։ Մեր շուրջ զանազան երկիրներուն մէջ՝ Թիֆլիսէն մինչեւ Վիլնուս, գեղանկարչութեան յատկացում են փոփոխուող չէնքեր։ Իսկ Երեւանի մէջ՝ սպառնութիւն։ Մինչդեռ առանձին ակադեմիա մը շատ ակելի արդիւնք կ'ընայ տալ ոչ միայն արուեստի իմաստով, այլ նաեւ նիւթագէտ։

Երեւանի մէջ սքանչելի նկարիչներու փաղանգ մը անինք։ Անոնց դործերը կ'ընան դնահատուի միջոցառման շուկաներու վրայ։

Գործի անցնիլ պէտք է, երբ մանաւանդ երկիրը արտասահմանեան դրամի պէտք ունի։

Երեւանի Գեղարուեստաթատերական Ինստի-

տուտը 560 ուսանող ունի, որոնց միայն 160ը թատրոնի կը հետեւին։ Նկարչութեան հետեւողները մեծամասնութիւն են - կ'արժէ անոնց առանձին ակադեմիա մը յատկացնել։

Մի դարմանաք եթէ ըսեմ, որ Հայաստանը հազար նկարիչ ունի։ Դուք պիտի ըսէք՝ Փարիզի մէջ 70-000 նկարիչ կայ։ Այո, մեր տղաքը մեծ երկիր մը բաւարարելու ուժը ունին։

Արամին հետ մեր խօսակցութիւնը կ'երթայ 13 ներու խումբի մը։ Բոլորն ալ նկարիչներ են։

Այս խումբը ինծի յիշեցուց «Նրբի դեգլա-րացիան» մեր դրականութեան մէջ - Չարենց, Աբով, Վշտունի։

«13ը բախտաբեր թիւ չէ» կ'ըսեն։ Բայց Երեւանի նկարիչ 13ը որոնց մէջ է նաեւ Արամ Իսարէկեանը, չի հաւատար ասեկոսէի. բախտը մարդ իր ձեռքով կը կերտէ, ահա իրենց հաւատամքը։

Այս տղաքը նոյն ձեռով չեն նկարեր։ Համախոհներ են, սակայն բոլորն ալ նկարչի կոչումին արժանի։ Հոն են Փարաւոն Միրզոյեանը, Վարուժան Վարդանեանը, Անաթոյի Գրիգորեանը, Սարո կալենցը, քանդակագործ Պետիկ Պապասարեանը եւ ուրիշներ։

Այս տղաքը պատկերասրահ ունենալու մասին կը մտածեն։

Խումբ մը պէտք է դործ մը կատարէ այլապէս...

Այս խումբին իրադարձումներուն կը սպասենք։

Մինչ այդ, Արամ Իսարէկեանի Հարէպի անհատական ցուցահանդէսին մասին կ'ընանք ըսել, որ յատկապէս երկասարգ սերտունդին մօտ, նաեւ արարներու մօտ հետաքրքրութիւն ստեղծեցիւ անօրիս սուսաւ բազմաձայն խօսակցութիւններու, ինչ որ փոքր յաջողութիւն մը չէ։

Երկասարգ է Արամը։ Նուիրեալ մըն է։ Իր Ժողովուրդին ցաւերով ապրող մէկը։ Այս հէնքէն նկարիչ մը՝ անոյցման ըսելիքներ ունի մեզի։ Կը սպասենք սիրով իր խօսքին, իր դոյներուն ու գիծերուն։

Կը մաղթենք նաեւ, որ իրականապէս 13ին Լըրազանքները։

Այլք երազանքներուն իրականացումը միայն շահ կ'ընայ բերել Նրբի եւ Արտերկրի հայութեան։

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Հարէպ, 11 Մայիս 1991